ԺԱՄԱՆԱԿ

ՀԱՆԴԷՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԷՐ

6 ՄԱՅԻՍ Ե· ՏԱՐԻ 1867 ԹԻՒ 114

Կը հրատարակուի երկու չաբաթը անգամ մը ՇԱԲԱԹ օրերը։ Բաժանորդագրութեան գինը պարեկան 3 արծաթ Մէճիտիէ։ Յառաջանալիք բաժանորդէ պիտի պահանջուի տարւոյն վերջը տարեկան ընթացքը հաշուելու օրինակը։

Դռուս երեսէ էրեսագրոյ ձամբու ծախքը առնողին վրայ է։ Աստղագրութիւնները տարւոյն առաջին թուականն ի՛ցանկին։

Պապական ազգայնոց յեպտէմ ընդհատը, —1852 և 1867 թուականներուն մէջ անոնց վրայ երևցած մեծ զգալի պարբերութիւնը, — ազգային և ծողովրդական զգացմանց պահպանութիւնը ու ազգասիրութեան նուագը, — ընդ Փրօթեսանպայի հպատակութեան դէմ մը, — Մէճմուային ևս այն գոհունութեանց ենթարկուելը, և պարզապէս Փրօթեսանպայի հոյլ գործէ ըլլալը, — Մէճմուային ուհայնապարծութիւնները իր 688 թուովը։

(Շարունակութիւն 113 էջին և վերջ)

Մրջյոի ցանկութեան արժանի վիճակի մը մէջ կը գտնուին մեր Պապական ազգայինք, որոնց մէջ ոչ գլուխն է և ոչ ոտքը, ոչ վարչութիւնն և ոչ ընթացք մը յայտնի կերևայ. այլ ամէն բան կը կարգադրի և կը տնօրինուի ըստ քմայ և ըստ հաճոյից Չաուշեանի և անոր համախոհից։ 13—14 տարի յառաջ ուղղուած կարգադրութիւնը ոչ թէ միայն չեն կրցած ըստանալ Պապական ազգայինք, այլև ունեցած արատներնին ալ հետզհետէ կորուսին. ո՞ւր է իրենց աշխարհական պատրիարքնին. ո՞ւր է այն ատենուան համարձակ և աներկիւղ լեզուն. հիմա կարծես թէ ընկճուած, ընկրկուած և տուայտած են այնպիսի անուրի մը տակ, զոր իրենք 13—14 տարի յառաջ մերժած են, բայց ցարդ չեն յաջողած։

Կեցցէ Չայոց ազգ և Աահմանադրութիւն հնչա. ոչ այդպիսի օտարի ձեռքով կառանաւարուած չղթայի կը յանձնէ իր վիզը, և ոչ իր ժողովրդական ազատութիւնները ոտնակոխ ընել կուտայ իրենց ներուն. և այսօր իր ազգայնութիւնը, իր կրթութեամբը, իր հանճարներուն վրայ, իր նիւթական վիճակաւը զգալի յառաջադիմութիւններ ունի, որոնք իրմէ խորթացած զաւակներուն քով չեն երևիր։ Կաթողիկոսները Պատրիարքները և իշխանները իբրև ազգային հաստատակաց հոյր և պաշտօնեայ ժողովրդեան ձայնին հետևելու պատրաստ են։ Իւրաքանչիւր իշխող տերութեանց տակ քարձրագոյն պաշտօնեայներ և առաջին կարգի քաղաքագէտ Չայեր ծնած է բուն իսկ ուսաւորական եկեղեցին, որոնց քով Պապական Մէճմուային անհարկած փաշաները պէյերը և եֆենտիները դեռ շատ հետ կը գտնուին։

Երկրիս չորս կողմը օր ըստ օրէ վաճառականութեամբ ծաղկելու վրայ են Չայք. արուեստներու հետամտութեան զարմանալի փոյթ կը տեսնուի. բժշկականութեան, հողագործութեան, գեղարուեստից պարագրելու իղձեր կ'երևին, և շատերն ալ փառաքկըպակուին։

Այլ սակայն Վենետիկի և Վիէննայի Մխիթարեանց միաբանութիւնները և Մուրատեան ու Ռափայելեան վարժարանները պիտի ցուցընեն մեզի։ Երէկ անաչառ և անկողմնակալ ոգւով քննութիւն մ'ընենք, Վենետիկ և Վիէննա 150 տարուան ընթացքին մէջ ազգայնոցմէ տեսած օգնութեանց փոխարէն հատասար արդիւնք մը չեն ցուցըցած։

Չոս արժան կը համարինք Պ. Միսաքեան անուանի գրագէտին մէկ նշանաւոր դիտողութիւնը գնել Ազիգեներես ի վերջոյ տեարակին 58 երեսէն առնելով.

Ինչ է պատճառք երախտիքդիդ. և Չայոց բերանները ձեր ամարդութեանցը դէմ մինչեւ վերջը կարած պահելու չափ մեծ

բանե՛ր են : Մխիթարեանց մէկ քանի հանճարները Հայոց հին լեզուն մշակեր են : Շատ աղէկ են ըրեր : Բայց Հայոց լեզուն Հայոց ձեռագիրներուն օգնութեամբը մշակած ըլլալ նուազ , ձեր հանճարին արարչութիւնը չէ : Հայոց ձեռագիրներն ալ Հայոց վանքերին ու գրանցներին հայթայթելիվիդ , ձեր բաղձանաց լրանալը համար ձեզի պարտք է Հայոց վանքերուն ու գրանցներուն երախտապարտ ճանչնալ ինքզինքնիդ : Բայց դուք առ ընէք կամ չընէք , որովհետեւ լեզուն կենդանացնելու համար ձեր աշխատասիրները մատղաշ ձեռագիրները մաղելու քրտինք թափեր են , Ազգին մէջէն գրաբառի մատղաշ ունեցողները քրտինքներնուն ամէն մէկ կայլակին բիւր շնորհակալութիւն կ'ընեն :

Գանք որ առ լեզուով քանի մը պիտանեգոյն գրքեր թարգմաներ են ձեր աջազգիններէն , այսինքն մէկ խառնուրդն հաներ մէկալ խառնուրդը թաղեր են , կամ թէ ըսեմ , ճրագը մէկ գրասենեակն տակէն հաներ մէկ ուրիշ գրասենեակի մը տակ են գրեր : Ասոր համար չորս հոգի միայն հանկիւնացուն շնորհակալ կրնան ըլլալ , իսկ ընթերցողաց բազմութիւնը առ շնորհներնուդ անդգայ ձեռնու կը պարտաւորի :

Ա՛ հնարհառաջ հրատարակած գիրքերնիդ ալ գանե՛ գրաբառութեան պարծանքը ձեղի չի տալեր զատ , ազգը առաջ տանելու բաներ ըլլալեն այնչափ հեռու են , որչափ որ Բաբը Հայոց Կաթուղիկոսն : Բայց ձեռնարկուդ եւ ճանը այնչափ ըլլալով , անոր ալ շնորհակալ ենք , առ ժամս երախտապարտութեան մեծ բան մը չիկայ :

Բայց արդար ըլլանք դատաստանումս մէջը : Առ պիտանի կամ անկարելոր գրքերուն ամենամեծ մասին տպագրութեան արդիւնքը Հայ բարերարներէ հաստատած են , անանկ որ այն գրքերը ձրի տալու արքայագրութեան մէջ էք պղտասէր եք նէ , և թէ որ ելած գինովը վաճառելու ըլլաք նէ , գրամագլուխները ձեր վաստակոցը բաւական հատուցմունք կ'ըլլան : Վասն շահ ալ ընել կ'ուզէք . ուստ ալ ամէն չկհամարիք : Ցիշեցէք հիմայ գիրքերնուդ հրեղէն գիները , չիշեցէք աղքատ բանասէրներուն երակներէն քաղած ստակներնուդ չափը , նայեցէք որ ազգին բարերարներուն գիտմանցը գէմ բրած անգութ ապերախտութիւններնուդ կշիռ կուգայ Հայոցմէ ընկալած կարճեալ ապերախտութիւններնիդ :

Տատեան Յովհ . սկիզբ բազմաթիւ պարգեւներով և օժանդակութեամբ լոյս վ ենետիկի Մխիթարեաններէն , որպէսզի աշխարհագրական և ուրիշ պիտանի գիտելեաց գրքեր հրատարակեն , և ասոնց հետ կ'աղաչէր նաև որ Հայերը հերձուածող չհանչնան իրենց գրոցը մէջ . թէև ետքը այն բարերարին կամացը հակառակ ըրին . (տես Պատմութիւն Մխիթարեան Հաւրց , Ս . Թէոդորեանի Հատոր Գ . երես 182) :

Ընդհակառակ Սամուէլ Մուրատ ալ եթէ գիտնար որ իր արծաթովը Հայոց աղքատ զաւակները Փրոփոկանտայի աշակերտելու պիտի ծառայեցնեն Մխիթարեանք , արդեօք կ'ընէր այն ընտրը , կամ կըսպասէր վ ենետիկու Մխիթարեանց :

Իսկ ինչ արդիւնք եղած են Մուրատեան և Ռաֆայէլեան վարժարաններէն , և ինչ արդիւնք վ ենետիկի և վ իէննայի Հայց միաբանութեան տպարաններէն . հոս երկարօրէն քննել արժան չեմք համարիր . բայց անոնք հիմա շատ աղէկ ճանչցուած և կշռուած են : Մէկ մուրան Թոզ պարապ տեղը երկար Թուարկութիւններ չընէ . ահա Թէոդորեան վարդապետը , այն ընտիր , անուշաուտ և տպագասէր Հայրը , որ իր աշխատասիրած չորս հատոր պատմութեանը մէջ ծայրէ ի ծայր ցաւօք և հեծութեամբ կը յայտնէ Մխիթարեանց ապերախտութեան և տգիտութեան ընթացքը . Թող լսէ ամեն մարդ անոր վկայութիւնները , որոնք Թուահամարներովը կընշանակենք հոս . բայէք ու կարդացէք . և դուն Աճմուռա պատասխան տուր այս ծերուկին , որ ինծմէ , քեզմէ և շատերէ աղէկ տեղեկութիւն ուզել Մխիթարեանց վրայ :

« Ընդ ղլայ վարք սորա (Հիւրմիւզեան Գէորգ Եպիսկ .) տեսանի ի պատճառս մատակարարութեան Ռաֆայէլեան և Մուրատեան վարժարանաց , յիրաւունս ծառանգութեան պղտպայ հայրն Ղեւի , ըստ դիտաւորութեան բարեբարայ , ամփոփելով սորա զայն ի վայելս մանաւորաց և պղտպեպայ ոմանց , ընդ որ բողբէ Հ . Մարգիս բաղում անգամ և լսելի ոչ լինի . որպէս տեսանի յընթացս Ր . և Գ . հատորոյ , տեսանի այն ի վայրապար ծախս արծաթոյ աղքատաց Ազգին Հայոց , զի ՋԱՄՍ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՀԻԳ ԵՐԵՔ ՄԻԼԻՕՆ ՓՐԱՆՔ եկամուտ Մուրատեան վարժարանին ծախին , և ԵՐԵՔ ՈՒՍԵԱԼ աշակերտք դեռ անտի ոչ ելլին : Թէպետ և ցաւի ընդ այն յոյժ Հ . Մարգիս , և գտանէ դարման ցաւոց , այլ սա (Գ . Հիւրմիւզ) ոչ կամի կաղմնաւոր և կասկածոտ բառըք իւրովք : » (Հատոր Գ . 607—608) :

« Պահանջեցաւ նա (Յովհաննէս Մուրատ) ի Միաբանութենէս համար երիս- փլեղն ֆրանկ եկամուտ տան մայց , որ ի կալուածոց գպրոցի հօր իւրոյ , որ ծախեալ են վասն 40 ևեթ մանկանց և կարճեցեալ աղտպ մանկանց և ի Պօլսոյ միայն , և այն վասն իբրեւպարտ ուսմանց նոցա ի Պատուհան . և վասն երեսուն ևեթ մանկանց , նայնպէս կարճեցեալ աղքատ մանկանց և ի Պօլսոյ միայն , վասն չափ ուսմանց նոցին ի Փարիզ » : (Հատոր Գ . երես 266) :

« Իսկ զինչ ասացուք զարհամարհութենէ առաքարկութեան նորա (Հ . Մարգսի) որ ի ժողովին . ոչ ապաքէն պատուէր իսկ այս ինքնահաճ կամաց և անճանաչող մտաց նորին (միաբանութեան) . և չիցէ այս պատճառ տգիտութեան ազգիս , և նախատանաց Միաբանութեան , և այս չետ հաստատելոյ նորա յիւրմէ պա զամ հարիւր չիտուն , և այս չետ ունելոյ նորա ի ձեռին իւրում 3 միլիոն ֆրանք գլուխ գրամոյ Լողեալի բաթերարաց վասն ըստութեան համօրէն Ազգին . չահ գրամագլխոյն այնորիկ զամ երեսուն

բերէ ջրոս միլիան ֆռանք. ֆանի մանկոանի գոս-պարալէցան այնո-, և ալ՞նչ օգո-ս եղե ապգին Հա-յոց. ըսե էկոս-որո-լիան բարերարոց »։ (Հատոր Ի. երես 416)։

« Ընտանօր ի դէպ համարիմք քննել ըղ-պատճառ այսր ախտի (ինքնահաճութեան) տիրելոյ Ամերիկացւոց վ էնեակոյ։ Ըստ-ջին է, առանձնութիւն նորա ի վայրս իրրև յանապատի բնակեալ և անհաղորդ ցերպոյի գիս-նոց և իմաստնոց, և ԱՆԴԱՆՕԹ ԳՐՈՑ ՆՈՑԱ, թէպէտ գտանին այնք ի գրանոց նորա. . . թէպէտ և հարուստ լիասն ամք բնակութիւն նորա ի Լեզուն հայկական, թէպէտ և ոչ ամենեքեան կարեն պարծիլ յայն, սակայն այնու հատարակ հպարտանան և արհամարհեն զայլս »։ (Հատոր Ի. երես 383)։

« Ըս յորժամ յիշատակութիւն ինչ գանուանէ միաբանութեանս ի մատենի ոչխրոք Ամերիկացւոց տեսեալ՝ յայնժամ ի կարգս հա-մալսարանաց Ամերիկայ զվանս իւրեանց դա-սեն, և եթէ ոմանք ի նոցանէ ճո-ւրացածոյ բան-է տետրակ ինչ յօրինեալ իցեն, ի թիւս քաջ մատենագրաց Ամերիկացւոց զանձինս համա-րին »։ (Հատոր Բ. երես 382)։

Ակճմուան 150 տարուան վանքերը մեր առջև դրած ըլլալով, իրաւունք ունեցանք մենք ալ անանց նայնչափ տարուան արդիւնքը փնտռել. և Սարգիս վարդապետը մեր տեղը պատասխանեց։ Ընկէ 20–25 տարիի չափ յառաջ (ըսել է Մխիթարեանց հաստատութենէն 125–130 տարիի չափ եառը), Ազգը տա-կաւին լեզուաց և գիտութեանց ծանօթու-թիւն չունենալով, մեծ համարում ունէր Մխիթարեանց վրայ. բայց երբ ազգային վար-ժարանները ի Պօլիս և ի Զմիւռնիա ծաղկիլ սկսան, Մխիթարեանց արժէքը սկսաւ պակսիլ այնպէս որ ոչ Հայկ դէ-պաշնը ոչ Հ. Վ ևանդեայ Ն-ափները կարող եղան առաջին վարին ու համարումը ձեռք ձգել. մեր մէջ Հայկաբանութեան համար նախնի ընտիր մատենագրոց ընթերցումը սկսաւ հանրանալ. դասագրոց համար ալ ի Պօլիս և ի Զմիւռնիա հոգ տարուեցան ըստ բաւականին. իսկ ուսմանց և գիտութեանց մասը, բանասաեղծութիւն և գրագիտութիւն ևն Լեզուաց, մանաւանդ Վաղվերէնի մէջ աւելի առատ գըտնըելով, միօրինակ սոյն տիեզերական լեզուին և այլ և այլ ուսմանց պարապիլ սկսուեցաւ։ Մեր մէջը հարուստ անձինք իրենց զաւակները, և աղքատ զաւակներ ևս որդեգրելով ըստ կարի խրկել Վաղվոց վարժարանները. որոնց-մով ազգային մտաւորական զարգացումը կերպարանափոխուեցաւ և ծաղկիլ սկսաւ։ Ի-թէ Մխիթարեանց մնայինք, խեղճ պիտի ըլ-լայինք հիմա. ինչպէս որ Պապականն ջանաւոր ազ-գայինք իրենց զաւակները Մուրատեան և Ի-ֆէնտեան վարժարանները կամ վ ենետիկ Մխի-թարեանց վարժարանները խրկելով, չկրցան հաստատուն կրթութիւն մը տալ իրենց զա-ւակաց և օրինաւոր դաստիարակութիւն մը. ինչպէս որ Սարգիս վարդապետը անաչառու-թեամբ կը գրէ իր աշխատասիրութեանց շատ էջերուն մէջ, որոնցմէ մէկն է նաև հետեւեա-լը։

« Սկսեալ է արդէն նուազիլ վարկին Միա-բանութեանս, և այս այնչափ մինչև համար-ձակին ոմանք անտի յանդիման մեզ ասել թէ ազգս չսպասէ ի միաբանութենէս այլ գիտու-թիւն, բայց ի Հայերէն լեզուէն. և յայն ևս ընտրութիւն առնեն, ընդ Հայերէն վ. Հ. Ալբէնի միայն հաճին, և հաստատութիւն այսմ ահա յանցեալ ամենեան հասին այսր ի Պօլսոյ մանկունք յազգէս հնգեպատառ. ի մարդ-գիպո-ղենէ, հանդերձ երկու վերակացուիւք, որք և զետեղեցին զմանկունս ի զանազան դըպ-րոցս Գաղղիացւոց. . . ոչ կամեցան և ոչ զլին ի նոցանէ ի վարժարանս մեր դնել. . . . . վասն զի չունին նպատ վարկ զմեզ. . . քանզի Սահման Պէյն համարձակ գկարծիս իւր յան-դիման վ Հենդ (Գ. Հիւմբոլդեանի) ասաց առաջ ի Փարիզ. « Ոչ եթէ դուք գիտութիւ-ձերով կամիք վարել զգպրոցդ, բարւոք առ-նէք զայդ ի Պօլիս տարեալ հաստատել »։ (Հատոր Ի. երես 378)։

« Այլ երանի թէ Հ. Ալբէն ի կարևորա-գոյնն և յօգտակարագոյնն պարապեալ էր, ի քերականս և ի բառգիրս Յոյն, Լատին, Ի-տալ. և Գաղ. լեզուաց, և ի գրականութիւն նոցին, որք ի նպատս ուսուսմնասէր մանկանց և մատենագիր արանց ազգիս Հայոց։ Այլ աւաղ, անտի փառասիրութիւն յաղթէ ձըշ-մարիտ ազգասիրութեան. . . զի զինչ փառք լինեն նմա, և զինչ օգո-ս ազգիս ի բանասիրեցո-ղենէ Հայոց, և ի Թարգմանութենէ գործոց Հոմերի, Վիրգիլեայ, Միլտոնի, Տեմոսթենեայ, Կիկերոնի, Մասիլոնի, և Պօսուէի, ան-ծանօթ գոլով ազգիս գրականութեան նոցին. ծանօթութեամբ նորին կարիցէ նա առնուլ ճաշակ և օգուտ լինչ ի գործոց անտի։ Երա-նի թէ Պեր. Ներս. չէր ծախեալ զանգին ժամանակ իւր յանպիտան և ի վնասակար նըն-դիրս խնբծոց, յառաւել լիմն կամակոր իշխա-

նուիրեալն գահին Հռոմայ, և յանհնարին գայթակղութիւն լուսաւորչեայցս »։ (Հատ. Ի. երես 378)։

« Թողում ձեզ ասել զմարգմանութեանց գործոց Հոմերի, Վիրգիլեայ, և Միլտոնի, յորոց ոչ միայն օգուտ ապրին լինի, զժուարիմաց գոլով նոքա, ըստ վկայելոյ բազմաց անտի, և զրպա ոչ ընդ քննութեամբ էարկ ոա (Լիւբմիւզեանն) երկինչելով ի խառնուածս բարուց Թարգմանչի նոցին, ըստ վկայելոյ ուրուսին յիւրոցն ոանտի։ և Թողում ձեզ ասել զանհնարութենէ աշխատութեան Թարգմանչին, զի Հզդն Հայոց պէտս ունի կենդանագործ գիրուքեան, և ոչ անշահ բանասիրաց ծուրեան »։ (Հատ. Գ. երես 611։)

« Ինդգեմ գրով ազդարարութեան Հ. Սարգսի ի Փարիզ, հրատարակել տայ ոա (Լիւբմիւզեանն) զՆդեբխանաօսուրիւեան որ առ Ջարմանպեանն Հատուն, և պէտի լինի պգին, և ոչ պէրելի Պապին, և ոչ այսչափ միայն, ԱՅԼ ԵՒ ԳԵՐԻ ՀԱՍՈՒՆԻՆ, և կորուսանէ զարդիւնական անձինս Միաբանութեան » · · · (Հատոր. Գ. երես 612։)

Տակաւին բազմաթիւ վկայութիւններ կրնայինք յառաջ բերել Սարգիս վարդապետի հելլինակութենէն, որոնց ամէնքն ալ Միսիթարեանց անվայել ընթացքը, անօգուտ գործերը և Մուրատեան ու Պաֆայէլեան վարժարանաց ապարդիւն վիճակը յայտ կանդիման կը ցուցնեն։ Թէ ասոնք և թէ մեր ուրիշ ըսելիքներն ուրիշ առեթի կը թողունք։

Ահա, սիրելի ընթերցող, այսչափ են Միսիթարեանց արգիւնքները՝

Մուրատեան և Պաֆայէլեան վարժարանաց պատասխանները՝

Պապական ազդայնոց ոխութ և յետադէմ վիճակը

Նոր Պապական-Ազգմուային ուսանողապարծութիւնները։

Ս. Հրուսաղէմայ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը Հապէշստանի Թէոդոր կայսեր ձեռքէն անգղիայի կալանաւորներն ազատելու համար, ըստ խնդրանաց Անգղիական կառավարութեան, ամսոյս մէկին ճամբայ հաներ է ի Հապէշստան Դեր. Յոահաք Արք Եպիսկոպոսը, Տիմոթէոս վարդապետը, և Թարգման մը։ Յոահաք սրբազանն իր հետ կը տանի կայսեր արժանի Թանկագին ընծաներ, Ս. Պատրիարքէն գրուած ոսկեղօծեալ տառե-

րով օրհնութեան կոնդակ մը երեք էպսկոպոսաց Հայերէն, Հապեշերէն, և Արաբերէն, և եպիսկոպոսական զգեստ մը, Հապեշստանի մէջ Ս. Պատարագ մատուցանելու պատրաստութեանը համար։ Կը յուսանք որ Յոահաք սրբազանը իր բնածին գործունէութեամբը յաջողութեամբ ի գլուխ պիտի տանի այս մեծ գործը, և ազատէ այն կալանաւորները, զոր բաւական տարիներէ ի վեր Անգղիոյ կառավարութիւնը բազմաթիւ միջոցներով չկրցաւ յաջողեցնել. և ասով մեծ պատիւ պիտի բերէ իր Միաբանութեան և ազգին։ Մեծ հաւանականութիւն կայ այս գործոյն յաջողութեան, և կը կարծուի թէ Յոահաք սրբազանը ինք պիտի արդիւնի ի տեղւոյն անդ զնացի բանտարկելոց. վասն զի արդէն Հապեշստանի քրիստոնեայ ժողովուրդը ինչպէս նա և Խափոք յայտնի կ՚ընէ Ս. Հրուսաղէմի տեղեկագրին տեղեաց մէջ ըստ ամենայնի մեր ազգին հետևակն են, և Հապեշստանի հոգևոր տեսչութիւնը Խափոի եպիսկոպոսներուն ձեռքն է բայց անոնցմէ մեծ զգուանք ունին. Հապեշք, վասնորոյ քանիցս Հայոցմէ խընդրած են, կ՚ըսուի, որ յատուկ եպիսկոպոս մը յուղարկուի հոն հոգևոր տեսչութիւնը վարելու. և թէպէտ Ս. Հրուսաղէմի Միաբանութիւնը քանիցս եպիսկոպոս խրկելու դիտաւորութիւն ունեցեր է, բայց Խափոնէրուն ի հնարս՝ կամաեղծոյն հեռաւորութեան պատճառաւ վտանգաւոր ըլլալուն համար այս խորհուրդէն ետ կեցեր է։ Այս անգամ կը յուսացուի որ այս առթիւ յաջողի և այս գործն ալ։ Կը վախնանք որ Աիօն ամսագիրը այս մասին տեղեկութիւն հաղորդէ մեզի, և այս խնդրոյն ինչ ըլլալը և կամ մեր առած տեղեկութեանց ստեղծ ընդարձակ մէկ պատմութիւնը հրատարակէ, ի տեղեկութիւն հետաքրքրի ազգայնոց։

Աւետիքեան Ոսմանեան էֆէնտիին Նոր բանդեանցի վրայ յօրինած ճառը։

(Շարունակութիւն 112 էջէն և վերջ)

Այո, արդարութիւնը որչափ որ զօրաւոր ըլլայ, որչափ որ կառուն անիրաւութեան հրամայական դէմ, միշտ պիտի յաղթուի. ինչպէս որ մարդկութեան և ազգութեան այս չնաշխարհիկ հիւկ եակը, հայրենիք հայրենիք մրմնջող ջրթունքը, բոլոր կենսագը մէջ Հայոց հայութիւ-

նը ճանչցնելու համար անդադար մաղեցնող սիրտը, հեծկլտանոց ձայներով այսօր կը յայտ Թուի, և անարգանաց վուշերով վիրաւոր եալ մարմինը Միսերիայ սառնապատ լերանց գիրկը կը նետուի։ Ա՛հ, մեզի և յուսահատ խորհուրդներ կը ծնանին մտքիս մէջ, կուրծքս կը բաբախէ, երբ կը յիշեմ թէ ժամանակին կայծակէն շանթահարեալ, յանկամայս կը սրա նայ նոյն ցուրտ ժեռուտ և ամայի վայրերուն մէջ, և հոն իւր վերջին հայ շունչը կարձակէ. սակայն ինչո՞ւ կանչնչանայ, ինչո՞ւ տարաժամ մահուամբ կը մեռնի, ինչո՞ւ, վան ալ, եղբայրք իմ, լսեցէք ու սոսկացէք, յանցանքը հոգւով և սրտով հայ ըլլալն էր։ Սակայն հոս Տաճկաստան մեր բարեխնամ Ինքնակալին հովանաւորութեանը ներքև հայութեան յանցանք չկայ, հոս գոհացուցիչ ազատ օդ մը կը շնչեմք. անաչառ լսօսելով մեր ազգին ուսման մէջ յառաջադիմելու յոյսը Տաճկաստանէն է։ Ուր րեմն հիմայ որոնք որ հայասէր են, Թող աչքնին այս հաղուագիւտ Ալեքսանդեանց երիտասարդին գերեզմանը, տեսնեն նաև անոր լեռնային պահապանները, որոնք կարծես այս գերեզմանը հսկելու համար աշխարհիս հետ ապրիլ ուխտած են. որպես զի ջրլոյ Թէ իւր սառուերը այս ծանր ու ամբարիակ շիրմէն փախչելով՝ երկինի ու երկրի մէջ տեղը հանգչելու կանգնի, ու դարձեալ արդարութիւն արդարութիւն աղաղակէ։ (Խոցոտած է մինչև վերջ գոյը)։ ով Միսերիա Միսերիա, սոսկումն մարդկային ազգին, լերինք աղատասէր յանցաւոր. քու բարձրաբերձ գագաթիդ մինչև ըսոտոգ նախատանոց տառեր դրոշմուած են. սերեղերայ բաղաքը անկարող է քու գրկերդ մարդ մը յարիշտակել՝ մինչև որ ժեռուտ արտասանութեան հրամանը չարձակէ. դուն մարդկային սեռին մահն ես, քու առաջին գունդդ ներս մանողը պէտք չէ յիշել զաշխարհ, մարդկութիւն, ընտանիք ևայլն, վան ալ միւս գունդդ անգին ալ աշխարհ չի կայ. բարձրացիր, որչափ որ կուզես, արդէն մեկ ձեռքդ հիւսիսային բևեռին կրթնած է, երկնցուր միւս ձեռքդ ալ դէպ ի հարաւ, օրինացդ սրով զաշխարհս կազմակերպելու և զանի վայրկեան և կնճռոտ գոռացնելու։ Ինչ որչափ որ բարձրանաս, ընդարձակիս ու տանքաս, ահաւասիկ քու վախճանդ այս փոշին, այս քարն է որ առանց պայթելու պիտի համ փսխէ գքեզ։ Ուղեցաք իմ, ահաւասիկ այս Թուենաշունչ մթնոլորտին և այս ցուրտ քարին տակ մեր բազմարդիւն ազգասէր եղբայրը կը ննջէ. յուսահատ և անմխիթար ողջոյ ու լացի մէջ Թողուով իւր աղբը և գինքը սիրողները։ Վերեզմանն գերեզմանն, ես ալ կը սիրեմ ըզքեզ, ես ալ քու սրտիդ սրտակից սիրտ մը ունենալով քու անգդ գիմեցի, քեզի հետ խօսելու, քենէ Խրատուելու և քու ընթացիդ հետևողը ըլլալու. ձայն տուր, չուշդ անշշուկ, չեմ ես օտար. գքեզ սոսկացնելու և քու չիրիմդ խռովելու համար չեմ ես այնպիսի գաղանիք մը՝ որ տատրակի պես գերեզմանաց՝ վախի պէս մեռեալ և սիրտ վերահեղելու համար ժանիքները ցուցնէ. քու գովելի յանցանքդ պահարակող մէկը չեմ. չունիմ ես այնպիսի Թագ մը կամ գահ մը որ մեկ պատգամաւ կենդանի շուներ սպրդէ ու դաշտաց ու լերանց վրայ և իրենց չէնքերովը մարդկային ազգին անհետները քու կինիդ պէս չիրիմներու մէջ ամփոփէ. ով գերեզման ամենակալին վիշտ չունչը չմեռնիր. մարդոց բռնութիւնը այն է որ հողագանգուած մարմնոյ կապերը քակելով հողը հողին տալ միայն գիտեն։ Սակայն յաւիտենական շունչին արդիւնքը որ միանգամ Թղթին վրայ կնայ և տպաւորվի զայն կնդրող անհամար մարդերուս մէջ, սուր կամ Միսերիա երբեք չպիտի կարենայ ընկել. յայտնի է քու մեծ տպդ արգասիքը ով ոգիդ սքանչելի. գիտնա Միսերիա ալ Թէ խորհրդածութիւն մը կամ մտաց ծնունդ մը չմեռնելը այլ միշտ իւր գերեզմանին վրայ կանգուն կը կենայ. օն անգը պատասխան տուր հայ եմ ես. (ձեռքը կը սրտի) ահ, հայ ձայնէն չիրիմը կը դողայ. ահա իւր ոգին (ոգին գերեզմանէն դուրս կելլէ "Ընդ Ընդոստ" երգը կը ղոշէ)... ով ոգիդ աղատասէր, դուն բանաստեղծին աշխոյժը կը վառես, խանդը քերթողդ. և այս բռնաւոր լերանց վրայ մեղեն Թևերը անկարող ըլլալով քու ձայնդ խեղդելու՝ հիմայ այդ վեմ խօսքերը իւր գաղափարը վրայ կը Թռչտին. գոհ եմ քենէ. գոհ ոգիդ. հիմայ ազատ աշխարհին մէջ կարծես կապրիմ (ոգին ի՛ընչ. ոհ ինչպ է ճանապարհդ, չէ ընդ գոյանդ նպասէ, ազատութի՞ւն սիրողին, այս աշխարհս ընդ նեղ է։) Սակայն Տաճկաստան Միսերիական աշխարհին մէջ չէ (ոգին. ազատութի՞ւն սիրողին այս աշխարհս ընդ նեղ է. կանչպանայ։) Ոհ, անհետացաւ, միշտ ազատութիւն սիրողին այս աշխարհս շատ նեղ է գոչելով, որովհետև Միսերիա միշտ կանարդէ ազատութիւնը .... Միսերիան Նեբոպոլոյ մինչև կէս մէկքը բռնած անհամար ժողովրդոց վրայ անվճեռը կը նետարկէ և իւր անխնայրուն չափ հարուածները հանդարտ կամ խռովեալ ջուրերը կը վշտացնեն և անոր փրփուրները այս բռնակալ

նաւուն ծնօտէն ներս սրսկուելու առեն ինքը կը զովանայ և կը խայտայ ։ ։ ։ (գառնալվ դէպ ի լեռները ։) բայց գիտցիր դու ալ որ նոյն փրփուրները միանալով դարձեալ ալիք են ։ Մի սոնքար պղչափ այս մարդախիտ ծովուն վրայ հեծած ըլլալուդ ։ ծովացեալ ժողովուրդը չի մեռնիր բայց իւր տակը կրնայ առնուլ նոյն բռնաւոր նաւը ։ Ժամանակը աշխարհի մէջ առանց անշարժ հիման վրայ բան մը հաստատելու միշտ կը շարժէ և կը տատանէ, բարձրացուր հիմա աչքդ դէպի ամպերը, և տես թէ ամպին մէջ խառնուած գլուխ մը կայ այս գլուխը քու գագաթանցդ վրայէն աչքիդ մէջ կը նայի ։ Ասիան է այն վեհապանծ գլուխը որ հայուն հառաչանքները իւր լայն սրտին մէջ ծածկելով՝ ժամանակին հրամանաւ օր մը դարս պիտի ցայտէ, դատ պիտի վարէ քեզի դէմ և ազգ և աղինք իրաւունք է պիտի գոչեն։ (Ինչի վարգոյը հը գոյ՞ւ) Հիմա Թող ծածկուելին ամէն հայ սրտերու մէջ մեր վիշտն ու հառաչանքը կենդանի նկարներով ։ և Ասիերիա ալ Թող գիտնայ Թէ հարուածէն վերջը մռաչցումը չլայջորդեր ։ Նղբայր իմ, ահաւասիկ հայրենասէր Նալբանդեանցի ալէտալի վախճանը, այսպիսի հաղթագիւտ անձի մը վախճանը պէտք է սգալ կարեկցութեամբ և ոչ Թէ բառերու շղղրթոթ հիւսուածքով, անոր յիշատակը անջնջելի տառերով մեր սրտին վրայ գծագրել, քանչ կշռելով խորհրդածել Թէ մարդ իւր կեանքը աշխարհիս հետ չհաւանիր փոխանակել, սակայն այս ազգասէր անձը իւր կեանքը ազգին զոհեց միշտ ազատութիւն գոչելով, ուրեմն մեք իւրաքանչիւր անհատս ի բոլոր սրտե իւր հրաշալան և սրտաչարժ տաղնն տողերը յիշելով գոչեմք միշտ ։

Հետևեալ երկու ընտիր և խորհրդաւոր բանաստեղծութիւնները՝ որ կոմս Լոմնոսէլ և Վահունի անուններով՝ Նալբանդեանցի գործն են, հոս կը հրատարակենք Հիսիսափայլի Դ տարւոյ 11 Թիւէն առնելով ։

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳ 1859 ԹՈՒԱԿԱՆԻՑ

“Ո՞ր հայրենիք, Թշուառ, անտէր,
Մեր Թշնամւոց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ գանչումէ,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ ։”

“Ո՞ր հայրենիք շղԹաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրը արիւնով
Պիտի լինի աղատուած ։”

“Նհա եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չէղայ,
Արտասուքով լուացի ։”

“Նայիր նորան, երեք գունով,
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի Թշնամւոյ դէմ,
Թող կործանուի Ասարիան ։”

“Ինչքան կին մարդ, մի Թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Ջանց չարեցի քո սիրուն ։”

“Նհա իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանգէս ։”

“Վհռնայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝մեռնէ ։
Բայց երանի՛, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհվի ։”

“Գնա, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սերը քաջալերը,
Գնա, Թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր ։”

“Գնա մեռիր դու քաջի պէս,
Թող չտեսնէ Թշնամին
Քո Թիկունքը, Թող նա չասէ
Թէ վատ է խառնացին ։”

Այսց ։ տուեց օրհորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ասղնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ ։

Նղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,
Առաւ ղէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր ։

— Բուբիկ, — գանչեց քաջ պատանին, —
Մնաս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան ։

Նա սո՛ւրբ է ինձ, երբ ակռաւած
Արտասուքով ու կնքած,

Դա յանձնեցիր ինձ ինչպես,
Հայրենիքի նուիրված ։

Թէ մեռանիմ, դու մի սգար,
Լմայիր որ տարեցի
Դէպ ի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թշնամի ։

Այդ, վազեց դէպ ի հանդէս
Աստուածային յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ,
Աստուածութիւն իտալեան ։

Ո՛հ, իմ սիրտս կարատուելմէ
Տեսանելով այսպէս սեր,
Դէպ ի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր ։

Սարա կէսը, կէսի կէսը,
Գէթ երևէր մեր ազգում.
Բայց մեր կանայք ... ո՛ւր եղիչէ,
Ո՛ւր մեր պինայ փափկասուն ։

Ո՛հ ... արտասուք ինձ խեղդումեն,
Այլևեմ կարող բան խօսել.
Չկ ... թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են ։

Կոմս Լ. Մոմպռէլ։

ՏԵՍԻԼ.*

Ընձեան վերջերում, նայեմքեր աւերն
Ցրտին սառչած իմ տանս միջին,
Հիւանդ, անկողնում տրտմալից սրտով,
Միայն ամբողջ, երեք օր, վերջին,

Ելայ ու գնայի մեր գիւղին մօտիկ
Գեղեցիկ մի դաշտ, դրութեամբ փոքրիկ,
Որոյ սահմանը փակել են բլուրք.
Տեսարան աչքի ուրախ, գեղեցիկ ։

Ինութիւնն իւր աչեն գեղեցիկ ձիրքեր,
Զեղմօրէն այս տեղ անխնայ թափել էր.
Ձմեռան ցուրտ շունչ թէև դեռ չկար,
Բայց պարզ նորա հետ երևելի էր ։

Արևն երբ որ գեղեցիկ դէմքով
Հորիզոն ի վեր խաղումէ փառքով,
Աստղին իւր լոյս, կարծես թէ այս տեղ
Պիտի ամիսվէ ոսկեայ ճառագեղով ։

Իսկ լուսնի պայծառ լոյսը խաւարի,
Հեռաքերը անհետ առնէ գիշերի,
Եւ մի հոյակապ կրակի նման
Այս դաշտի վերայ վառ լուսով փայլի ։

Մինչ այսպէս միայն կայի զարմացած,
Ասելով ինձ ի փառքդ, ոմէ աստուած ...»
Եւ ահա տեսայ մի մարդ հոյակապ,
Բլրի գագաթից իջանումէ ցած ։

Ուրախ ու փայլուն դէմքով մօտեցաւ,
Անունս, ազգանունս իսկոյն հարց արաւ.
Եւ երբ ճանաչեց հայկազեան սերունդ,
Իւր սուրբ բերանը կրկին բաց արաւ.

«Անունս է Ոգի հայասէր մարդկան.
Ծնունդ եմ միակ սիրոյ մարդկութեան.
Սկզբից մինչև այժմ անարգ մարդու պէս,
Շրջումեմ անտուն և միշտ անկեան ։

«Ամեն մի հայի չար վարք ու բարքեր,
Զարկեցին սրտիս բիւր հազար նետեր.
Իմ պաշտօն թուեցաւ նոցա հակառակ
Երբ սխալումէի սուրբ սիրոյ սերմեր ։

«Ա՛յլ իմ խօսքերին ընդդէմ ու ներհակ
Շինեցին նոքա մի չար ամբարտակ.
Դարձան թշնամի անհաշտ ազգութեան,
Թափեցին արիւն հայոց համարձակ ։

«Ըմբռ, որի գործը, որ մարդու արարք,
Պատմեմ մի առ մի, պատանի հայազգ.
Մեհրուժան, Վասակ, Նիկոլ, Կիրակոս,
Զանգակ, Վեստ Սարգիս, գիւաճէին Սուքիաս,

«Իշխան ազգութեան կործանիչ պատճառ,
Աչերման երկրի, գործով անարդար.
Ազգութեան հիմքը, նաև հաւատքի
Խախտեցին նոքա մինչ ցայսօր խոպառ ։

«Այդպա գործերը չէր մեղքաւական.
Սատանայ բնութեամբ, մի մարդ անպիտան
Սրտից դժոխքից, ինչ կայծակ զարկեց,
Թափեց արիւնը ... ծերի պատուական ։

«Հայապէի սիրտը ի սուգ համակեց,
Նորա խորհուրդները հիմնովին քանդեց.
Ազգի վերքերի թարախը սրբելու
Փոխանակ, կրկին վերքերը բացեց ։

«Բայց և արժանի, այսօր ահա նա,
Հազար, բիւր տանջանք պիտի ստանայ.
Թէ այս տեղ, թէ անդ, Աստուծոյ ձեռնից
Յաւիտեան ի հուր գեհենին կը մնայ ։»

* Այս Տեսիլը ներբեր կաթողիկոսի մահուան նկարագրին է ։

Այսպէս ասելով գնացինք միասին,
Կանգնեցինք բլրի մաքուր գագաթին.
Այն տեղից ցոյց տուեց մի վանք հոյակապ,
Շքեղ զարդարած պարսպով ահագին։

«Այս տեղից ահա ես եկայ քո մօտ,
Պատմելու մի անոյշ, որ այս առաւօտ
Անցաւ իմ ու միւս մարդկան առաջև,
Ահա պարունակ անոյշին համառօտ։

«Պաշտօնից անուամբ գնացի այն տեղ,
Մտայ վանքի մէջ, զարդարած շքեղ,
Սենեկից սենեակ անցայ, և միւսում
Զանազան աթոռք դրած են մէջ տեղ։

«Զանցաւ մի րոպէ, և ահա եկան
Զանազան մարդիկ, իմ մօտ ներս մտան.
Ամէնն իւր համար պատրաստած տեղում
Կարգով, խորհրդով, կարծես բազմեցան։

«Իսկ նոցա մէջ տեղ մի մարդ էր բազմած,
Պաշտօնին յարմար ղեկտները հագած,
Մօրուքն սպիտակ, փառահեղ, գունեղ,
Կարճիկ հասակով, սրբութեամբ վառուած։

«Ընդեղ, սուրբ սիրոյ կայծը երեսին
Փայլում էր, յստակ վերայ ճակտին
Կապել էր կամար շնորհք արարչի
Հարազատ պարգև հայազդի ոգին։

«Վերեզմանական լուռ թիւն խորին
Պատել էր նստած մարդերի սրտին.
Մի մարդ սևագլուխ հասակով միջակ
Զբաղած էր անձայն ծերի առաջին։

«Նախանձ սևախանձ, աչքի մէջ արիւն...
Պարզաբար տեսայ, տեսիլ մռայլուն.
Դիմաց գծագիրն ինձի ցոյց տուեց,
Այս պարզ նշաններն, գիրասա էր անուն։

«Փառահեղ դէմքը ծեր մարդոյ, ուրախ,
Սկսաւ բարբառել հոգւով անխարդախ,
Որ ներե յանցանք այն չքնաղ մարդու
Որ մերկ դիմակով սատանայ խարդախ։

«Ասէց. «Ով գիրասա, ծառայ հաւատար.
Զկամքիմ Թողուլ խորհուրդս անկատար,
Եւթը տ. գնա կրկին քո տեղին,
Ուսոյ քո տերոջ հրամանովն եկար։

«Շատ մարդիկ ինձի, երբեմն խօսքով,
Գանգատ տուեցին երբեմն գրով.
Բայց և բոլորի վատաբանութիւնք
Անպտուղ եղան քո պատճառներով...»

Դէռ խօսքը կիսատ, դէմքերը բացուեց,
Սևագլուխ մի մարդ մեր ներս մօտ վազեց,
Կատաղի դէմքով նայեց չքնաղին
Եւ նորա կողքին ինքն էլ չքնեց։

«Հայր իմ ալեզարդ, ծերունի հայկազն,
Խիղճ իմ տանջեց, որ ուշիդն ու պարզն
Յայտնեմ ձեր առաջ, որ այգքան տարի
Պահել չկարացայ, դիտե՛ք ձեր Աստուածն...

«Ինչ նախ խոստացիր, հայր իմ հայազդի,
Տալ իմ մարմինը կերակուր շների.
Կամ ի կախաղան, նշաւակ մարդկան,
Միայն թէ չտալ նուիրած հողի։

«Ծերունի մարդու... այս իմ պիղծ ձեռները
Թաթաւեց արեամբ այս չքնաղ ընկերը.
Վա՛յ իմ տարաբաղդ գլխին յաւիտեան.
Չկան ինձ ոչ այս, ոչ այն տեղ յոյսեր։

«Թոյն խառնած նռան հետ կարմիր ջրի
Նորա խորհրդով սուրբը ծերին տուի....
Նա միւս առաւօտ չկար երկրումըս....
Նորան այն մահով մեծ փառք հատուցի։

«Ինչ, արձակ մեր մեղքն խոստովան եղայ
Մեր դատաստանը ձեր կամացն կայ.
Տուէք երկուսիս արժանի պատիժ
Ինձ և գիրասային, բնութեամբ սատանայ։»

Յետոյ դադարեց. խորին լռութիւն
Տիրեց սրտերին, դիմաց ամէնուն,
Ապա ալեզարդ ծերը բարկութեամբ
Գոչեց բարձրաձայն, յայտնի բոլորուն։

«Մահու դու օրդի... այ դու մարդատեան,
Անխիղճ, անհոգի, բաժին դիւական.
Ինչպէս իշխեցիր ձեռներդ յուդայի
Թաթաւել մի մեծ մարդու մէջ արեան։»

Այս խիստ ընթացքը յանկարծ հանդարտեց,
Ջերմեռանդ արտօսր երեսին փայլեց.
Իբրև մարգարիտ թափուեցաւ գետին.
Դարձեալ առաջին բարկութեամբ ասեց.

«Իմ արդար դատից, չես երբեք պրծնիլ.
Զանազան կերպով հարկ է քեզ տանջուիլ.
Անիրաւ, անգութ, անխիղճ դիւածին,
Քանի կենդան եմ, ինձնից չես փրկուիլ

«Իսկ այն աշխարհում ծերուհու... և քո,
Դատաստանն կայ ձեռին Աստուծոյ.
Նղովեալ լինիս, դաւաճան ադի...
Կայեն, Մեհրուժան, դահիճ արդարոյ...»

Վ–ՀՈՒՆԻ

ՏՆՕՐԷՆ = ԽՄԲԱԳԻՐ
ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱՋԵԱՆՑ